2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է _____ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:¹⁷ Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարման ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 1) նախատեսված չափերով և ժամկետներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:¹⁹

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊՏԱՍՄԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝

¹⁷Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագրի ընդունվելու պահանջը ալ ԱԱՀ-ն չի առերևույթ հանվում:

¹⁹Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվել է իր ապրանքը չի հանդիսանում մի մասնակա միջոցով: Բնական թե գնվել է իր ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չի պետք է պակասի ինչ 365 օրացուցային օրին:

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²⁰ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆԱՐԹԱՆԱԴԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԻՏՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:²¹

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար

²⁰ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունը և ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար

²¹ Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ և առաջաց նոգանումների դեպքում սույն նախադրյալները պայմանագրից հանվում են:

առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձևերի փոփոխության, որը կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:²²

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:²³

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի

²² Ս ու լ յ ն կ ե տ ը հ ա ն վ ու մ է պ ա յ մ ա ն ա գ Ր ի Յ Գ, ե թ ե պ ա յ մ ա ն ա գ Ր ը չ ի ի Ր ա կ ա ն ա գ վ ու մ գ Ո Ր ծ ա կ ա լ ու թ Յ ա ն պ ա յ մ ա ն ա գ Ր ի կ ն ք ե լ ի ու մ ի ջ ը ո ճ ո վ :

²³ Ս ու լ յ ն կ ե տ ը հ ա ն վ ու մ է պ ա յ մ ա ն ա գ Ր ի Յ Գ, ե թ ե պ ա յ մ ա ն ա գ Ր ը չ ի ի Ր ա կ ա ն ա գ վ ու մ հ ա մ ա տ ը դ գ Ո Ր ծ ու ն ե ու թ Յ ա ն (վ ո ն ս ո Ր Գ ի ու մ ի) պ ա յ մ ա ն ա գ Ր ի կ ն ք ե լ ի ու մ ի ջ ը ո ճ ո վ :

միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Գողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
 «_____» 2022թ. կնքված
 ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-22/ԳԳ-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ - ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ	Միջանցիկ կոդը ըստ CPV դասակարգման	Անվանում	տեխնիկական բնութագիր	Չափի միավոր	Միավոր գին /ՀՀ դրամ/	Քանակ	Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/	Մատակարարման հասցե
1	39111140	աթոռներ	Աթոռ փայտյա ընդանուր բարձրությունը 100սմ. լայնությունը 40սմ. նստատեղի բարձրությունը 45սմ. լայնությունը 40սմ, երկարությունը 40սմ: Նստատեղը բարձր խտությամբ սպունգով, հաստությունը 4սմ. վրան պաստառապատված շագանակագույն կտորով: Աթոռի ոտքերը ամրացված միմիանց կապող փայտյա դետալներով: Հենակը մասամբ պաստառապատված նստատեղի կտորով: Հենակի և նստատեղի միջև անկյունը 100-105°: Գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	հատ		85		ք. Երևան, Ավան, Բաբաջանյան 9
2	39121520/1	գրապահարան ապակե դռներով	լամինացված դեսպեյից 18մմ. հաստությամբ: Չափսերը 180սմx42սմx90սմ. վերևի հատվածում 2 ապակյա դռներ, ապակու հաստ 4մմ. 2հատ արձաթագույն բռնակներով 12.8սմ. երկարությամբ: Եզրափակված մդեֆի պրոֆիլներով. չափերը 109սմx44.5սմx 2սմ: Մեջը 2հատ դարակաշար միմյանցից 36սմ. բարձրությամբ: Ներքևի մասում փակ լամինացված 2 դռներ եզրափակված մդեֆի պրոֆիլով. 2հատ արձաթագույն բռնակներով 12.8սմ. երկարությամբ. չափսերը 56սմx44.5սմx2սմ. մեջը մեկ դարակաշար ներքևից 26սմ. բարձրության վրա. պահարանի վերևի մասում 5սմ գոտի, ներքևում 8սմ տումբա, պլասմասե ոտնակներով: Պահարաններից մեկ հատը, ապակե դռների փոխարեն լամինատից դռներ եզրերը եզրափակված մդեֆի պրոֆիլներով: Գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ. Չափագրումը և տեղադրումը մատակարարի կողմից:	հատ		14		ք. Երևան, Նալբանդյան 128 (12հատ) ք. Երևան, Ավան, Բաբաջանյան 9 (2հատ)

3	39131100/4	տումբա դարակներով	տումբա լամինացված դեսպեյց 18մմ. հաստությամբ եզրափակված ՄԴՖ-ի պրոֆիլով 60սմx45սմ, բարձրությունը 70սմ. 4 հատ դարակներով, վերևի դարակը փականով, ռոլիկների վրա, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	հատ		12		ք.Երևան, Նալբանդյան 128 (2հատ) ք.Երևան, Ավան, Բաբաջանյան 9 (10հատ)
4	39121360/1	ղեկավարի սեղան 3 կտորից	Սեղանի բարձրությունը 75սմ, լայնությունը 76սմ, երկարությունը 220սմ: Սեղանի դիմային մասը փակված լինի հատակից 28սմ.բարձրությամբ 1.6սմ հաստության լամինատով: Աջ կողմում 45սմ.լայնությամբ 3 հատ շարժական դարակ, 12.8սմ.երկարությամբ բռնակներով: Կողադիրի չափերը՝ 140սմ երկարությամբ 60սմ. լայնությամբ 70սմ.բարձրությամբ: Դիմադիրի չափերը՝ լայնությունը 60սմ., երկարությունը 70սմ. բարձրությունը 70սմ.: Հատակից ամրացվի մեկ ոտքով: Սեղանի, կողադիրի և դիմադիրի բոլոր եզրերը և ոտքերի եզրեր եռաշերտ 1.6սմx/0,8սմ/սպիտակ/x1.6սմ հաստությամբ լամինատներով, ընդհանուր եզրերը պատված 2սմ պիվիսիով: Գույնը վենգե լամինատը ֆակտուրնի: Արտաքին տեսքը, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Չափագրումն ու տեղադրումը մատակարարի կողմից: Սեղանի վրա համակարգչային լարերի համար պատվիրատուի նշված տեղում կլոր անցք իր պլաստմասե դետայլով: Նկար N1:	հատ		1		ք.Երևան, Նալբանդյան 128
5	39121360/2	ղեկավարի սեղան 3 կտորից	սեղանի բարձրությունը 75սմ, լայնությունը 80սմ, երկարությունը 180սմ. աջ կամ ձախ կողմում 45սմ. լայնությամբ 3 հատ շարժական դարակ 12.8սմ. երկարությամբ բռնակներով: Կողադիրի չափերը երկարությունը 120սմ, լայնություն 50սմ, բարձրությունը 70սմ.: Կողադիրում լինի դարակաշար: Դիմադիրի չափերը՝ 50սմ.լայնությամբ, 60սմ երկարությամբ, 70սմ բարձրությամբ տակից ամրացվի մեկ ոտքով: Սեղանի,կողադիր, դիմադիրի եզրերը և ոտքերը եռաշերտ 1.6սմ x /սպիտակ0,8սմ./ x1.6սմ. բոլոր եզրերը պատված 2սմ.պիվիսիով: Գույնը վենգե լամինատը ֆակտուրնի: Արտաքին տեսքը, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Չափագրումն ու տեղադրումը մատակարարի կողմից: Սեղանի վրա համակարգչային լարերի համար պատվիրատուի նշված տեղում կլոր անցք իր պլաստմասե դետայլով: Նկար N1:	հատ		1		ք.Երևան, Նալբանդյան 128

6	39121360/3	ղեկավարի սեղան 3 կտորից	սեղանի բարձրությունը 75սմ, լայնությունը 80սմ, երկարությունը 180սմ. աջ կողմում 45սմ.լայնությամբ 3հատ հավասարաչափ բաժանված շարժական դարակներ 12.8սմ. երկարությամբ բռնակներով և փականով: Կողադիրի չափերը երկարությունը 120սմ, լայնությունը 50սմ, բարձրությունը 75սմ: Կողադիրում լինի հավասարաչափ բաժանված շարժական դարակաշար: Դիմադիրի չափերը լայնությունը 50սմ, երկարությունը 60սմ, բարձրությունը 70սմ տակից ամրացվի մեկ ոտքով: Սեղանի բոլոր եզրերը պատված 2սմ.պիվիսիով: Գույնը մոխրագույն կող /եզգեռ.13.46/: Արտաքին տեսքը, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Սեղանի վրա համակարգչային լարերի համար պատվիրատուի նշված տեղում կլոր անցք իր պլաստմասե դետալով: Արտաքին տեսքը, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Չափագրումն ու տեղադրումը մատակարարի կողմից:	հաստ	1		ք.Երևան, Նալբանդյան 128
7	39121360/4	ղեկավարի սեղան 3 կտորից	սեղանի բարձրությունը 75սմ,լայնությունը 80սմ երկարությունը 200սմ. Սեղանի դիմային մասը փակված լինի հատակից 28սմ.բարձրությամբ: 1.6սմ.հաստության լամինատով: Աջ կողմում 45սմ. լայնությամբ 3հատ շարժական դարակ, 12.8սմ. երկարությամբ բռնակներով: Կողադիրի չափերը 120սմ երկարություն, 50սմ լայնություն, 70սմ բարձրություն: Կողադիր հատվածում շարժական դարակաշար, 12.8սմ. երկարությամբ բռնակներով: Դիմադիրի չափերը 60սմ լայնությամբ, 70սմ երկարությամբ, 70սմ բարձրությամբ, տակից ամրացվի մեկ ոտքով: Սեղանը, կողադիրը, դիմադիրը և ոտքերը եռաշերտ 1.6սմx/0,8սմ/սպիտակ/x1.6սմ բոլոր եզրերը պատված 2սմ /պիվիսիով/: Գույնը վեներ, լամինատը ֆակտուրնի: Արտաքին տեսքը, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Չափագրումն ու տեղադրումը մատակարարի կողմից: Սեղանի վրա համակարգչային լարերի համար պատվիրատուի նշված տեղում կլոր անցք իր պլաստմասե դետալով: Նկար N1:	հաստ	1		ք.Երևան, Նալբանդյան 128

8	39121520/2	պահարան խորշի	Պահարան խորշի 195սմx78սմx43սմ չափսերով, պատրաստված 1.8սմ. հաստությամբ լամինացված ԴՄՊ-ից: Բոլոր երևացող մասերը պատված PVC եզրաշերտով: Բաղկացած 5 հավասար դարակաշարից: Ծխնիները և բռնակները բարձրորակ: Հետևի կողմից փակցված լամինացված ԴՎՊ-ով: Լամինատի գույնը վենգե /ֆակտուրնի/: Արտաքին տեսքը, գույնը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Չափագրումն ու տեղադրումը մատակարարի կողմից:	հատ		1		ք. Երևան, Նալբանդյան 128
9	39121520/3	պահարան	Պահարան 180սմx70սմx55սմ չափսերով, երկու դռնանի պատրաստված 1,8սմ հաստությամբ լամինացված ԴՄՊ-ից: Բոլոր երևացող մասերը պատված PVC եզրաշերտով: Լամինատը ֆակտուրնի: Ծխնիները և բռնակները բարձրորակ: Հետևի կողմից փակված լամինացված ԴՎՊ-ով: Գույնը վենգե: Արտաքին տեսքը, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Չափագրումն ու տեղադրումը մատակարարի կողմից:	հատ		1		ք. Երևան, Նալբանդյան 128
10	44221140	լամինատից դռներ	Պահարանի դռներ պատրաստված 0,8սմ. հաստությամբ լամինացված ԴՄՊ-ից: Ընդհանուր 6 հատ համապատասխան չափսերով վերևում 3 հատ բարձրությունը 89,8սմ լայնությունը 44,5սմ, ներքևում 3 հատ բարձրությունը 172սմ, լայնությունը 44,5սմ: Ծխնիները և բռնակները բարձրորակ: Դռների բոլոր երևացող մասերը պատված 0,4սմ. հաստությամբ PVC եզրաշերտով: Դռները ներսից և դրսից եզրափակված մղեֆ պրոֆիլով 0,5սմ. հաստության 4-ից- 5սմ լայնությամբ Գույնը վենգե: Լամինատը ֆակտուրնի: Արտաքին տեսքը, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Չափագրումն ու տեղադրումը մատակարարի կողմից:	ք. մ		5		ք. Երևան, Նալբանդյան 128
11	44211510	լամինատից պատի պաշտպանիչ	Պատի պաշտպանիչ պատրաստված 1,8սմ հաստությամբ լամինացված ԴՄՊ-ից: 12գծ.մ 19սմ լայնությամբ: Որը տեղադրվելու է երեք սենյակներում: Բոլոր երևացող մասերը պատված 0,4սմ հաստությամբ PVC եզրաշերտով: Գույնը վենգե, լամինատը /ֆակտուրնի/: Արտաքին տեսքը, գույնը, համաձայնեցնել պատվիրատուի հետ: Չափագրումն ու	գծ.մ		12		ք. Երևան, Նալբանդյան 128

			տեղադրումը մատակարարի կողմից:					
12	39121520/4	լամինատից պահարան	լամինատցված ԴՄՊ-ից պահարան լամինատի հաստությունը 1.8սմ չափսերը՝ 210սմ.երկարությունը, 190սմ, բարձրությունը, 80սմ լայնությունը, պահարանը բաժանված է երեք հավասար մասերի յուրաքանչյուրը 70սմx190սմ չափսի դռներով, փականով և բռնակներով, մեջտեղի մասը օգտագործվում է, որպես հագուստի պահարան իր մետաղական ձողով, պահարանի ոտքերը և եզրերը պատված 2սմ.pvs-իով: Հետևի կողմից փակված լամինացված ԴՎՊ-ով: Գույնը վենգե /լամինատը ֆակտուրնի/ համաձայնեցնել պատվիրատուի հետ: Չափագրումը և տեղադրումը մատակարարի կողմից:	հատ		1		ք. Երևան, Նալբանդյան 128
13	39121520/5	լամինատից պահարան պատից կախվող	լամինատցված ԴՄՊ-ԻՑ պահարան լամինատի հաստությունը 1.8սմ: Երկարություն 30սմ, լայնությունը 20սմ, բարձրությունը 50սմ: Մեկ դռնով չափսը 30սմx50սմ բռնակով և փականով, պատին ամրացվող: Գույնը վենգե լամինատը /ֆակտուրնի/ համաձայնեցնել պատվիրատուի հետ: Չափագրումը և տեղադրումը մատակարարի կողմից:	հատ		1		ք. Երևան, Նալբանդյան 128
14	39121520/6	գրապահարան ապակե դռներով	լամինացված դեսպեյից 16մմ հաստությամբ: Չափսերը 200սմx50սմx90սմ.վերևի հատ վածում երկփեղկանի ապակյա դռներ, ապակու հաստ 4մմ: Բռնակները կլոր, արծաթագույն: Չափերը 122սմx45սմx2սմ, մեջը 2հատ դարակաշար բաժանված հավասար մասերի: Ներքևի մասում փակ լամինացված երկփեղկանի դռներ եզրերը պատված /պիվիսիով/. 13սմ.արծաթագույն բռնակներով, դռան չափսերը 62,5սմx44,5սմ մեջը մեկ դարակաշար բաժանված հավասար մասի: Պահարանի վերևի մասը 1.6սմx0,8սմ /սպիտակ գույնի/x1,6սմ. եռաշերտ գոտի, ներքևում 10սմ. տումբայով, պլասմասե ոտնակներով: Գույնը վենգե, համաձայնեցնել պատվիրատուի հետ.Չափագրումը և տեղադրումը մատակարարի կողմից: Նկար N2	հատ		1		ք. Երևան, Նալբանդյան 128
15	39111260/1	աթոռակներ (պուֆիկ)	տրամագիծը 330մմ, բարձրությունը 410մմ (կտորը բորդո /վիվետաման/, ներդիր՝ սպունգ, սպունգի հաստությունը 60մմ, հիմք ԴՄՊ), կտորի վրա կատարել դեպի կետրոն միացող կարեր: Հատակի հետ շփման մակերեսին 4 կետերում փակցնել 40մմ տրամագծով ԴՄՊ-ից գլաններ, բարձրությունը 18մմ, գլանների վրա փակցնել ռետինե մակերես՝ 35 մմ. տրամագծով: Ձևը, գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Նկար N3	հատ		8		ք. Երևան, Նալբանդյան 128

16	39121200/1	սեղան կլոր	սեղան կլոր 1.8սմ հաստության լամինատից 3 ոտքերով սպիտակ գույնի բարձրությունը 60սմ.տրամագիծը 90սմ.սեղանի եզրերը եզրափակված մղեֆով. Ձևը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ.	հատ		6		ք. Երևան, Նալբանդյան 128
17	39111260/2	աթոռակներ (պարկ պուֆիկ)	պարկ աթոռ տանձաձև միջին /պուֆիկ/ տրամագիծը 90սմ. Ըղհանուր բարձրությունը 115սմ. Նստաստեղի բարձրությունը հատակից 40սմ.կտորը ջրկայուն 65% բամբակ.35% սինթետիկ, մեջը լցված սինդիպոն: 10հատը կարմիր,10հատը կապույտ, 10հատը դեղին: Գույները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Նկար N4	հատ		30		ք. Երևան, Նալբանդյան 128
18	39141120	պատին հավաքվող դարակաշար	լամինացված դեսպեից 1.8սմ. հաստության սպիտակ գույնի պատին հավաքվող դարակաշար, եզրերը եզրափակված պլաստիկ ժապավենով /կրոմկա/: Չափսերը 40սմ. բարձրությունը և երկարությունը խորությունը 20սմ: Գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Տեղադրումով: Նկար N5	հատ		8		ք. Երևան, Նալբանդյան 128
19	39121520/7	պահարան լամինատից	լամինատցված ԴՄՊ-ից պահարան, լամինատի հաստությունը 1.8սմ, չափսերը՝ 176սմ.երկարությունը, 190սմ, բարձրությունը, 58սմ լայնությունը: Հետևի կողմից փակված լամինացված ԴՎՊ-ով: Պահարան բաժանված է երեք մասերի: Առաջին մասը 60սմx190սմ. չափսի, դռնով, վրան բռնարկով, երկրորդ մասը օգտագործվում է որպես հագուստի պահարան 176սմx47սմ չափսի դռնով, վրան բռնարկով: Պահարանի վերին մասում 25սմ. ներքև դարակաշար, 5սմ. ներքև մետաղական ձող հագուստը կախելու համար: Երրորդ մասի չափսը 176սմx65սմ. չափսի դռնով, վրան բռնակ.պահարանի ոտքերը և եզրերը պատված 2սմ.pvs-իով.գույնը կողը /էզզեռ/13.46/ մոխրագույն: Տեսքը և գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Չափագրումը և տեղադրումը մատակարարի կողմից: Նկար N6	հատ		1		ք. Երևան, Նալբանդյան 128
20	39121520/8	պահարան լամինատից	Պահարան 190սմx70սմx45սմ չափսերով, պատրաստված 1,8սմ հաստությամբ լամինացված ԴՄՊ-ից: Հետևի կողմից փակված լամինացված ԴՎՊ-ով: Գույնը կող /էզզեռ/13.46/ մոխրագույն: Պահարանի վերևից երեք հատ 40սմ բարձրության հավասար դարակաշարեր: Ներքևից 5սմ. բարձրության փակ երկու լամինատից դռներ իր բռնակներով: չափսերը 65սմx35սմx2սմ, դռների եզրերը եզրափակված մղեֆի պրոֆիլներով: Գույնը մոխրագույն: Արտաքին տեսքը և գույնը համաձայնեցնել	հատ		1		ք. Երևան, Նալբանդյան 128

			պատվիրատուի հետ: Չափագրումն ու տեղադրումը մատակարարի կողմից: Նկար N7				
21	39121200/2	սեղան 1 տումբանի	լամինացված ԴՄՊ-ից 18մմ հաստությամբ, եզրափակված մոֆ 10-45 պրոֆիլով 120սմ երկարությամբ, 80սմ լայնությամբ, 75սմ բարձրությամբ 3շարժական դարակներով վերևի դարակը փականով աջ կողմանի, յուրաքանչյուր դարակի բարձրությունը 13,5սմ. լայնությունը 40սմ 1 հատի գույնը սպիտակ, իսկ մնացած 52 հատի գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	հատ	53		ք. Երևան, Նալբանդյան 128 (3հատ) ք. Երևան, Ավան, Բաբաջանյան 9 (50հատ)
22	39121200/3	սեղան 2 տումբանի	լամինացված ԴՄՊ-ից 18մմ եզրափակված 10-45 մոֆ-ի պրոֆիլով 1,60մ երկարությամբ, 80սմ լայնությամբ, 75սմ բարձրությամբ 3 հարկանի շարժական դարակներով, յուրաքանչյուր դարակի բարձրությունը 13,5սմ, լայնությունը 40սմ: Աջ կողմում, փականներով, ձախ կաղնույն տումբա մեկ դռնանի մեջը բաժանված 2 մասի փականով: Գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	հատ	15		ք. Երևան, Նալբանդյան 128 (5հատ) ք. Երևան, Ավան, Բաբաջանյան 9 (10հատ)
23	39138220	աթոռ համակարգչային	Հոլովակավոր աթոռ ոտքերը հինգ թևանի խաչուկով, արմնկակալները պլաստմասե հիմքով, նստատեղը և թիկնակը կտորից երեսպատումով, բարձրացնող իջնող, ճոճվող մեխանիզմի հնարավորությամբ: Նստատեղը և թիկնակը՝ 4 սմ հաստության սպունգով: Նստատեղի չափսերը՝ 45*48 սմ: Թիկնակի չափսերը՝ 42*44 սմ: Քաշը՝ 8 կգ: Աթոռները լինեն հավաքված վիճակում: Նկար N8:	հատ	30		ք. Երևան, Նալբանդյան 128
24	39121360/5	սեղան դեկավարի 4 կտորից	սեղան դեկավարի լամինացված դսպից 18մմ. 4 կտորից՝ 1-ի կտորի լայնությունը 75սմ, երկարությունը 1մ.50սմ, բարձրությունը 75սմ: Աջ կողմից տումբա 3 շարժական դարակով: 2-րդ կտորի բարձրությունը 75սմ. ներքևի աղեղը 14սմ. արտաքին աղեղը 120սմ. Աջ և ձախ կողմերի լայնությունը 75սմ: 3-րդ կտորի լայնությունը 75սմ, երկարությունը 75սմ, բարձրությունը 75սմ: 4-րդ կտորի լայնությունը դիմադիր, չափսերը երկարությունը 60սմ, լայնությունը 60սմ, բարձրությունը 75սմ: Սեղանի բոլոր կողմերի և դիմադիրի	հատ	1		ք. Երևան, Նալբանդյան 128

			եզրերը եզրափակված ՄԴՖ պրոֆիլով: Գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Չափագրումը և տեղադրումը կատարողի կողմից:					
25	39111180	աթոռ՝ գրասենյակային	աթոռ՝ գրասենյակային կիսափափուկ, սև գույնի, սև երկաթյա ոտքերով փոշեներկված: Աթոռները լինեն հավաքված վիճակում: Նկար N9:	հատ		15		ք. Երևան, Նալբանդյան 128
26	44421300	չհրկիզվող պահարաններ	մետաղապահարան /սեյֆ/ մուգ մետաղիկ գույնի փականը թվային գաղտնաբառով, բանալիով: Չափսերը՝ 50սմx40սմx33սմ.	հատ		1		ք. Երևան, Նալբանդյան 128
27	39111220/1	բազկաթոռ ղեկավարի /կտորից շարժական ոտքերը նիկելից/	Հոլովակավոր աթոռ ոտքերը հինգ թևանի երկաթյա խաչուկով, արմնկակալները մետաղյա հիմքով՝ նիկելապատ, կտորից երեսապատմով, բարձրացնող իջնող, ճոճվող, ֆիքսվող մեխանիզմի հնարավորությամբ: Նստատեղը և թիկնակը մեկ ընդհանուր 1,5սմ հաստության ֆաներայով և առնվազն 7սմ և 35 խտության սպունգով: Պաստառը կտորե: Նստատեղի խորությունը մինչև թիկնակ 50սմ, թիկնակի բարձրությունը նստատեղից 67սմ, լայնությունը՝ 50սմ: Քաշը 11,5կգ: Երաշխիք 365օր: Աթոռները լինեն հավաքված վիճակում: Նկար N10:	հատ		20		ք. Երևան, Նալբանդյան 128
28	39111290	գրասենյակային անշարժ աթոռ-երկաթյա	Գրասենյակային անշարժ աթոռ-երկաթյա, նիկելապատ ոտքերով և արմնկակալներով: Երկաթյա կարկասը պատրաստված է՝ 45*25մմ խողովակով: Արմնկակալների հենման հատվածը փափուկ՝ կաշվեպատ, նստատեղը և թիկնակը՝ 1,5 սմ հաստության և մեկ ընդհանուր կտորից ֆաներայով: Նստատեղի լայնությունը՝ 53սմ, իսկ խորությունը մինչև թիկնակ՝ 50սմ, թիկնակի բարձրությունը նստատեղից՝ 63սմ: Նստատեղը և թիկնակը առնվազն 7սմ հաստության սպունգով՝ պաստառապատված բարձրորակ արհեստական կաշվով: Թիկնակի հենման ներքևի մասում առանձին բարձենման փափուկ կարվածքով, աթոռի ֆաներայի եզրային հատվածները նիկելագույն կանթով: Աթոռի քաշը՝ 11.5 կգ: Երաշխիք 1 տարի: Աթոռները լինեն հավաքված վիճակում: Նկար N11:	հատ		26		ք. Երևան, Նալբանդյան 128
29	39111220/2	բազկաթոռ՝ ղեկավարի	Ղեկավարի աթոռ հոլովակավոր հինգ թևանի, երկաթյա խաչուկով, երեսապատված փայտով: Արմնկակալները՝ բնական փայտե: Պաստառը՝ բնական կաշի: Նստատեղը և թիկնակը բարձր խտության՝ 10սմ սպունգով: Նստատեղի չափսերը՝ 54x50սմ, թիկնակի լայնությունը՝ 53սմ, նստատեղից թիկնակի վերին մասը՝ 75սմ: Նստատեղը և թիկնակը մեկ	հատ		5		ք. Երևան, Նալբանդյան 128

			ընդհանուր 2սմ հաստության ֆաներայով: Գլխի հատվածը՝ պաստառապատված, թիկնակից առանձին: Թիկնակը փոռիկավոր տեսքով պաստառապատված: Քաշը՝ 19 կգ: Երաշխիք՝ 365 օր: Աթոռները լինեն հավաքված վիճակում: Նկար N12:				
30	39151180	հայտարարությունների ստենդ	լամինացված դեսպեից 1.8սմ: Երկու Ապակե դռներով իր բռնակներով, փականով ապակու հաստությունը 4սմ, պատին ամրացվող, չափերը՝ 200սմx150սմ: Գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Տեղադրումով:	հատ		2	ք. Երևան, Ավան, Բաբաջանյան 9
31	39131100/1	պատին հավաքվող դարակաշար	լամինացված դեսպե 1.8սմ, պատին հավաքվող շեղանկյուն դարակաշար չափսերը՝ 60սմ.լայնություն, 40սմ.բարձրություն, 20սմ.խորություն անկյան շեղվածությունը 70°: Գույնը տեսքը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: (ՀՊՏՀ Բրենդային գույնին համապատասխան: Տեղադրումով:	հատ		1	ք. Երևան, Նալբանդյան 128
32	39131100/2	պատին հավաքվող դարակաշար	լամինացված դեսպե 1,8սմ պատին հավաքվող շեղանկյուն դարակաշար.չափսերը՝ 90սմ լայնությամբ, 60սմ բարձրություն, 20սմ խորությամբ, անկյան շեղվածությունը 70°: Գույնը (ՀՊՏՀ Բրենդային գույնին համապատասխան) և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ:Տեղադրումով	հատ		2	ք. Երևան, Նալբանդյան 128
33	39131100/3	պատին հավաքվող դարակաշար	լամինատե դեսպեից 1,8սմ պատին հավաքվող դարակաշար եռանկյունաձև, չափսերը՝ բարձրությունը /գագաթը/ 50սմ, երկարությունը 90սմ, լանությունը 20սմ: Գույնը (ՀՊՏՀ Բրենդային գույնին համապատասխան) և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Տեղադրումով	հատ		3	ք. Երևան, Նալբանդյան 128
34	39121200/4	սեղան ուղղանկյուն	լամինացված դեսպեից սեղան 1,8սմ հաստությամբ, չափսերը՝ բարձրությունը 80սմ, լայնությունը 50սմ, երկարությունը 120սմ: Գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ:	հատ		1	ք. Երևան, Նալբանդյան 128
35	39292110	գրատախտակ 200սմ*100սմ.	գրատախտակ 200սմx100սմ, սև գույնի, պատին ամրացվող կախիչներով լամինացված դեսպե 0,8սմ հաստությամբ, եզրերը պատված /ՄՂՖ/ պրոֆիլով. ներքևի հատվածում 7սմ լայնությամբ 200սմ երկարությամ կավիճի և սպունգի տեղով:	հատ		22	ք. Երևան, Նալբանդյան 128 (2հատ) ք. Երևան, Ավան, Բաբաջանյան 9 (20հատ)

36	39161100/1	աթոռ ուսանողական	Աթոռի բարձրությունը 75սմ, նստատեղի լայնությունը 370սմ., երկարությունը 360սմ, նստատեղից հենակի բարձրությունը 450սմ, 12սմ լայնությամբ, նրբատախտակ /ֆաներա/-9սմ հաստությամբ, կարկասը մետաղական, ուղղանկյուն խողովակով 20*20*1, նրբատախտակի ամրացումները հեղուսա մանեկով /շյապա/: Նկար N13:	հաստ	300		ք. Երևան, Ավան, Բաբաջանյան 9
37	39161100/2	սեղան ուսանողական	ուսանողական սեղան լամինացված դեպից 18սմ, հաստության սեղանի ոտքերը մետաղական ուղղանկյուն խողովակով 20*20*1.2, չափսը՝ 1300սմx500սմx750սմ. Սեղանի դիմացի վահանը 25սմ փակ, սեղանի երեք անկյունները կլորացված պատված 1սմ. հաստ. պիվիսիտով: Սեղանի ամրացումները հեղուսա մանեկով/շյապա/: Նկար N14:	հաստ	200		ք. Երևան, Ավան, Բաբաջանյան 9
38	39111320	ուսանողական սեղան և աթոռ (լրակազմ) 1 սեղան 2 աթոռ	սեղան ուսանողական, բարձրությունը կարգավորող /դասասեղան և աթոռներ/ լրակազմ՝ 1 սեղան, 2 աթոռ: Գրասեղանի չափսերը 1200սմ*450սմ*610սմ-ից մինչև 750սմ բարձրության կարգավորումով, հաստությունը ոչ պակաս 18սմ: Գրասեղանի նյութը կաուչուկի ծառից, ճնշման տակ փայտյա նրբատախտակ լամինացված: Անկյունները կլորացած, եզրերը կորացած/ֆրեզային: Սեղանի կախիչները աջ և ձախ կողմերից հարմարեցված պայուսակների համար պողպատյա, փոշեներկված: Դարակներ պայուսակի համար հաստությունը ոչ պակաս 0.6սմ. պողպատյա, փոշեներկված: Աթոռի չափսերը 360սմ*380սմ*350սմ-ից մինչև 450սմ. բարձրության կարգավորումով. նստատեղի և հենակի հաստությունը ոչ պակաս 12սմ. կորությամբ: Աթոռի նյութը կաուչուկի ծառից, ճնշման տակ փայտե նրբատախտակ լամինացված: Սեղանի մետաղական կառուցվածքը ուղղանկյուն պողպատյա խողովակ չափսը 40սմ*20սմ, հաստությունը ոչ պակաս 1.2սմ. փոշեներկված: Աթոռի մետաղական կառուցվածքը ուղղանկյուն պողպատյա խողովակ 19սմ. պարագիծը, հաստությունը ոչ պակաս 1.2սմ. փոշեներկված: Աթոռի հենակի մետաղական կառուցվածքը պողպատյա խողովակ 19սմ. պարագիծ հաստությունը 1.սմ. փոշեներկված: Սեղանի և աթոռի հատակի հետ շփվող մասերի նյութը՝ կաուչուկ կամ ռեզին: Ուղղորդվել ներկայացված գծագրով և նկարներով: Համաձայնեցնել	հաստ	30		ք. Երևան Պարույր Սևակ 77

			պատվիրատուի հետ նախապես: Նկար N15, Նկար N16, Նկար N17, Նկար N18:					
Պայմանագրի ժամկետը	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022թվականի նոյեմբերի 1-ը:							
Մատակարարման ժամկետը	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 (վաթսուհին) օրացուցային օրվա ընթացքում:							
Վճարման ժամկետը	Ապրանքն ընդունելու օրվանից հաշված 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում:							
Այլ պայմաններ	Ապրանքները պետք է լինեն չօգտագործված և նոր: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, հավաքումը և տեղադրումը պատվիրատուի պահեստում կամ պատվիրատուի կողմից որպես մատակարարման հասցե նշված տարածք, իրականացնում է մատակարարը իր միջոցների հաշվին: Ցուրաքանչյուր չափաբաժնով մատակարարվող ապրանքների ամբողջ խմբաքանակը պետք է լինեն մեկ տեսակի և պատկանի նույն ապրանքանիշին:							

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Նկար N1




Նկար N2



Նկար N3



Նկար N4






Նկար N5



Նկար N6



Նկար N7





Նկար N8



Նկար N9



Նկար N10



Նկար N11



Նկար N12



Նկար N13



Նկար N14



Նկար N15




Նկար N16



Նկար N17



Նկար N18



« _____ » 2022թ. կնքված
ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-22/ԳԳ-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատակարարված ապրանքների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամկացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1

«_____» _____ 2022թ. կնքված
ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-22/ԳԳ-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 _____ թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը _____ պայմանագրի համարը _____
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 _____ թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

